

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի վերաբերյալ

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրին՝ նշենք.

“2.2. Համախառն առաջարկ և համախառն պահանջարկ” բաժնում ներկայացված է, որ 2013 թվականին տնտեսական աճը կձևավորվի 4.7-5.7%-ի միջակայքում կանխատեսվող հորիզոնում կայունանալով 5-6%-ի շրջանակներում: Մեր կանխատեսումներով տնտեսական աճը գնահատվում է մոտ մեկ տոկոսային կետով բարձր և այդ պայմաններում իրական ՀՆԱ մակարդակը դեռևս փոքր-ինչ ցածր է լինելու իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակից: Տնտեսական աճի գնահատականների տարբերությունը հիմնականում բացատրվում է գյուղատնտեսության ճյուղի աճի գնահատականների տարբերությամբ: Մեր սպասումները գյուղատնտեսության տարեկան աճի վերաբերյալ ավելի լավատեսական են՝ աճի գնահատականը 4.5% է, մինչդեռ ԿԲ-ի կանխատեսումներով ակնկալվում է 2-4% աճ չնայած որ նշվում է, որ դա առավել քիչ ռիսկային տարբերակն է:

Նույն բաժնում համախառն պահանջարկին վերաբերող հատվածում ներկայացված 2013թ մասնավոր ներդրումների աճի 5.1 տոկոս ցուցանիշը բարձր է մեր գնահատականներից: Նկատի ունենալով, որ ներդրումների կառուցվածքում մեծ է շինարարության դերը, իսկ շինարարության կանխատեսումները հիմնականում համահունչ են մեր կանխատեսումների հետ, կարծում ենք ներդրումների բարձր աճի ցուցանիշը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Միաժամանակ, այն ենթադրությունը, որ 2013 թվականի ընթացքում տեղի կունենա *առևտրի պայմանների վարացում*, «Ներգիր 1»-ում բերված միջազգային ապրանքային շուկաների զարգացումներով լիարժեք հիմնավորված չէ: Մեր գնահատականներով համաշխարհային գների սպասվող զարգացումների ներքո առավել հավանական է, որ առևտրի պայմանները գոնե կմնան

անփոփոխ: Այս փաստարկը հիմնավորվում է ԱՄՀ-ի կողմից կատարված կանխատեսումներով, որոնց համաձայն 2013 թվականին ակնկալվում է նավթի գների առաջանցիկ նվազում ոչ նավթային գների նվազման համեմատ:

“2.3. Գնաճի կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող երեք տարվա հորիզոնում” բաժնի վերաբերյալ նշենք, որ դրամավարկային քաղաքականության ելակետային չեզոք սցենարի ընտրության ներքո, կենտրոնական բանկը պետք է շարունակի ցուցաբերել առավել բարձր ճկունություն՝ տնտեսական ակտիվության նվազման ռիսկերի դրսևորման պարագայում՝ պատրաստ լինելով ճշգրտել քաղաքականության ուղղությունները, քանի որ հարկաբյուջետային քաղաքականության ճկունությունը սահմանափակվում է պարտքի կայունության ապահովման խնդրով: Նշենք, որ ճկուն դրամավարկային քաղաքականության անհրաժեշտությունը էլ ավելի կարևորվում է համաշխարհային տնտեսության զարգացումներում պահպանվող վատատեսական սպասումների և գազի գների հնարավոր բարձրացման պայմաններում, որոնք տնտեսական աճի նվազման ուղղությամբ որոշակի ռիսկեր են պարունակում: